

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անցեալ համարում մենք գծագրեցինք այն տևողական նշանակութիւն ունեցող պարագաները, որոնք որոշում են եւրոպական մեծ պետութիւնների միջազգային քաղաքական յարաբերութիւնները: Այդ անեւուց յետոյ, մենք խոստացանք ներկայ համարում 1888 թւականի քաղաքական անցքերի տեսութիւնը տալ:

Անցեալ տարին սկսեց քաղաքական անհանգստութեամբ, գլխաւորապէս Ռուսիայի դեռ ևս 1877 թ. արած յայտարարութեան պատճառով, թէ նա ուզում է իւր «գործողութիւնների ազատութիւնը» պահպանել: Այդ յայտարարութեամբն է, որ Ռուսիան բաժանեց երեք-կայսերեան միութիւնից: Այդ յայտարարութիւնը ահագին աղմուկ բարձրացրեց Գերմանիայում և Աւստրո-Ունգարիայում. աղմուկ, որին պատասխանեց Русскій Инвалидъ պաշտօնական թերթը մի նշանաւոր և համարձակ յօդուածով, որի մէջ անց էր կացնում այս միտքը թէ՛ պատերազմի պատրաստուողը Աւստրո-Ունգարիան է և ոչ Ռուսիան: Այդ աղմուկներին մի այլ պատասխանն էր նաև ռուսաց Ֆինանսական մինիստրութեան կառավարիչ, իսկ այժմ մինիստր Վիշնեգրադսկու զեկուցումը 1889 թւականի պետական բիւջետի մասին, որտեղ զինուորական ծախքերը ոչ միայն չէին աւելցրած, այլ դեռ մի փոքր էլ կրճատուած էին:

Միջազգային յարաբերութիւնները բնատրոշող միւս ցոյցերից, որ եղան 1888 թւականին, առանձին ուշադրութեան արժանի են.

1) Գերմանիայի և Աւստրիայի մէջ հոկտ. 7-ին 1879 թ. կապած դաշնակցութեան պաշտօնական հրատարակումը փետրուար ամսին, որի մասին անցեալ անգամ երկար խօսեցինք, 2) ռուսաց Правительственный Вѣстникъ-ում դուրս եկած «պաշտօնական յայտարարութիւնը» Քօլզարիայի մասին, փետր. 11 (23). Տատիշչեւի յօդուածը Новое

Время *լրագրում* «Россія и Болгарія, историческая справка» վերնագրով՝ մայիսին, որին պատասխանեց պաշտօնական *Правительственный Вѣстникъ*, 3) ներմուծումը էլզաս-Լոթրինգիայում՝ պասպորտական խիստ սխտեմի ֆրանսիացիների դէմ՝ մայիսին, 4) ունգարական մինիստր-նախագահ Ցեսսայի անսպասելի խիստ պարլամենտական ճառը, արտասանած 26 մայիսի, ֆրանսիայի հասցէին, Պարիզի աշխարհահանդէսին մասնակցելու խնդրի առիթով, 5) Գերմանիայի նոր և երիտասարդ կայսր Վիլհելմ II-ի այցելութիւնները Ռուսիայի, Նվեդ-Նորվեգիայի, Դանիայի, Աւստրիայի և այլա մանաւանդ Իտալիայի զահակալներին՝ յուլիս և յաջորդ ամիսներում, 6) Մասսովայի միջնադէպքը, որը պարզեց բոլոր այն թշնամական դիրքը, որ ուզում է Իտալիայի այժմեան մինիստր-նախագահ Կրիսպին ընդունել ֆրանսիայի դէմ, 7) Կրիսպիի այցելութիւնը Բիսմարկին 21 (9) օգոստ. և Կալնօկիի հետ տեսակցութիւնը 25 (13) օգոստ., Կալնօկիի այցելութիւնը Բիսմարկին՝ 19 (7) սեպտ., 8) յայտնի Խորվատեան եպիսկոպոս կաթոլիկ Շորոսմայիերի շնորհաւորական հեռագիրը Ռուսիայի մկրտութեան 900-ամեակի առիթով և զորա համար տացած յանդիմանութիւնները կայսր ֆրանց-Յուլիէից, 9) ֆրանսիական նոր օրէնքը ֆրանսիաքնակ օտարականների մասին, և զորա առիթով եղած *լրագրական բացատրութիւնները*։

Այդ կէտերը, որ մենք յիշեցինք, առանձին բացատրութիւնների կարօտ չեն, այլ մի մի արտայայտութիւններ են այն ընդհանուր միջազգային քաղաքական ուղղութեան, որ մենք նախկին յօդուածում գծագրեցինք։

Ներքին քաղաքական դէպքերից, որոնք եղան անցեալ 1888 թւականին, և որոնց մի քանիսը բացատրուած են միջազգային քաղաքական դրութեամբ, իսկ միւսները լոկ ներքին քաղաքականութեան համար նշանակութիւն ունին, կը յիշենք հետևեալները։— Յունաբրին՝ ընտրութիւններ՝ ֆրանսիական սենատի մի երրորդ մասի անդամների, որոնցով ոչինչ նոր դրութիւն չը ստեղծւեց, քանի որ գրեթէ նոյն թւով սենատորներ ընտրւեցին ամեն մի կուսակցութիւնից, ինչպէս և առաջ էր։

Փետրուար ամսի 6-ին՝ Բիսմարկը կարգաց իւր նշանաւոր ճառերից մինը, որից յետոյ ընդունւեց զինուորական նոր օրէնքի նախագի-

Տը, որով երկրորդ կարգի (պահեստի) զօրքի մի մասը մտնում է կանգուն զօրքի մէջ և այդպիսով կանգուն զօրքի թիւը աւելցւում է, պատճառելով 280 միլիոն մարկ տարեկան նոր ծախք: (3 մարկ = 1 ոսկի բուբլուն):

Մարտին՝ մահ Վիլհելմ I. Գերմանիայի կայսեր և Պրուսիայի թագաւորի. նորա հիւանդ որդի Յրիգրիխ III ընդունում է թագաւորութիւնը և կայսերական գահը, հրատարակում է 25 (12) փետր. մի բեկրիպտ, որտեղ նա իւր քաղաքականութիւնն է ծրագրում, և նշանաւոր իւր հակաբիսմարկեան ազատամիտ ուղղութեամբ:

Անգլիայում պահպանողական Սայիսբիւրի մինիստրութիւնը ներկայացնում է պարլամենտին երկու նշանաւոր օրինագծեր՝ որոնցով Անգլիայում տեղական կառավարչութեան իշխանութիւնը շատ աւելի ընդարձակւում է, քան թէ այժմ, ուրեմն ձգտում է դէպի աւելի մեծ ապակենդրոնականութեան. մի բան, որ սպասելի չէր պահպանողականներին:

Յրանսիայում շարունակում է աղմուկ հանել Բուլանժէն. Տիրարի մինիստրութիւնը վայր է զցւում ապրիլին — և նրա տեղը կազմում է մի մինիստրութիւն, որը ցայժմ կառավարում էր Յրանսիան. դա նշանաւոր է նրանով, որ այդ երկրում, վերջին 18 տարիներում՝ առաջին անգամ կազմւում է մի մինիստրութիւն արմատական կուսակցութեան պատկանող. մինչդեռ արմատականները պարլամենտում փոքրամասնութիւն են կազմում: Այդ մինիստրութեան գլխաւոր անդամներն են՝ Յլօքէ, մինիստր-նախագահ և ներքին գործերի մինիստր, Յրէյսինէ (ոչ զինւորական, բայց բազմահմուտ մարդ) — զինւորական մինիստր, Գօբլէ՝ մինիստր արտաքին գործերի և այլն:

Մայիսին՝ դեռ ևս սկզբում պրուսական պարլամենտը ընդունեց կառավարութեան առաջարկութիւնը՝ պարլամենտը նորոգել ամեն 5 տարի, փոխանակ 3 տարւայ միջոցի (Բիսմարկեան քաղաքականութիւն, որի մասին առիթ կը լինի խօսելու այլ անգամ):

Յունիսի 15-ին վախճանեց Գերմանիայի կայսր Յրիգրիխ III, թագաւորելով միմիայն 3 ամիս և քանի մի օր: Նորա գործերից ամենանշանաւորը այն եղաւ, որ, իւր մահից մի քանի օր առաջ, արձակեց պաշտօնից խիստ բիսմարկեան՝ ներքին գործերի մինիստր Պուտկամերին:

Ֆրիդրիխ III-ի մահով և սորա որդի Վիլհելմ II-ի գահը բարձրանալով Բիսմարկի ամենակարողութիւնը վերստին հաստատուեց Գերմանիայում. և որովհետև Բիսմարկը մեծապէս աշխատած էր, որ Ֆրիդրիխ III-ին խանգարէ գահը բարձրանալու, ուստի սորա մահից յետ բացւեցին լրագրական մերկացումներ թէ՛ Գերմանիայում և թէ արտասահմանում, որոնք շարունակում են զբաղեցնել Եւրոպայի հասարակութիւնը և հրապարակախօսութիւնը նոյն իսկ մինչ այսօր: Այդ առիթով եղած հրատարակութիւններից ամենազլխաւորն էր «Ֆրիդրիխ III-ի յիշատակարանը Ֆրանս-գերմանական սլատերագովի ժամանակ» հրատարակութիւնը «Գերմանական տեսութիւն» ամսագրում (Deutsche Rundschau), սեպտեմբեր ամսի Խ-ում, որի առիթով բարձրացաւ մեծ փոթորիկ Գերմանիայի կառավարչական շրջաններում և որի հեղինակի դէմ եղած խուզարկութիւնները այսօր հասցրել են Ստրասբուրգի պրօֆեսօր Գեֆկենին դատարանի առջև, որը, սակայն նրան ազատ յայտարարեց: Գործը, սակայն, դեռ այժմ էլ շարունակում է: Նշանաւոր է նաև այն հանգամանքը, որ նոյն այդ գործի առիթով եղան խիստ յարձակումներ անգլիական դեսպանի դէմ Պետերբուրգում՝ սրը Մորէլի դէմ, իբր թէ նա ևս այդ պիշատակարանի՝ հրատարակութեան գործի մէջ խառն է եղած:—Այլ գրեւծներից, նոյն այդ գործի վերաբերեալ, իւր վերայ ուշադրութիւն է դարձնում նորերումն հրատարակած մի անստորագիր յօդած «Ժամանակակից տեսութիւն» անգլիական ամսագրում՝ «Բիսմարկ և նորա տոհմը» վերնագրով, որտեղ ուղում են ապացուցել, թէ Բիսմարկը վաղուց ձգտում է Գերմանիայի առաջին մինիստրի պաշտօնը դարձնել ժառանգական պաշտօն Բիսմարկի տոհմի մէջ:

Յուլիսին՝ կայացաւ մենամարտութիւն Ֆրանսիական մինիստր-նախագահ Յլօքէի և Բուլանժէի մէջ, որտեղ վերջինս յաղթեց. դէպք, որի անմիջական հետևանքն եղաւ՝ Բուլանժէի և կուսակից Գերուլեզի պարտութիւնը պարլամենտական մասնաւոր ընտրութիւնների ժամանակ:

Սերբիայում սկսեցին թագաւոր Միլանի և թագուհի Նատալիայի ամուսնական վէճերը, որոնք յետագայում վերջացան ապահարզանով:

Օգոստոսին՝ կոմս Մոլոկէն, դարուս ամենամեծ ռազմագէտը,

Գերմանիայի զինուորական գլխավոր շտաբի կառավարիչը, ծերութեան պատճառով, հեռացաւ իւր պաշտօնից և նորա տեղը նշանակեց կոմս Վալդերգեէ, Սօլտկէի նախկին օգնականը:

Ֆրանսիայում Բուլանժէն կրկին յառաջանում է. 19 (7) օգոստ. նա միաժամանակ ընտրոււմ է երեք դեպարտամենտներում:

Սեպտեմբերին՝ ուշադրութիւն դարձրեց իւր վերայ գերմանական պարլամենտի ազատամիտ կոչած կուսակցութեան պարագլուխ Ֆօն-Բեննինգսէնի նշանակելը բարձր վարչական պաշտօնի մէջ՝ իբր աւագ-նախագահ Հաննովրեան պրովինցի: Գորանից եզրակացրին, թէ Բեննինգսէնին նախապատրաստում են մտնելու մինիստրութեան մէջ, չնայած որ իւր կուսակցութեան դէմ Բիսմարկը կուռում է վերջին տասնեակ տարին:

Ֆրանսիայում հանրապետութեան նախագահ Կարնօ իւր աջողակ այցելութիւններն է շարունակում երկրի զանազան քաղաքներ, յորդորելով ժողովրդի հանրապետական զգացումները:

Հոկտեմբերին, Ֆրանսիայում, մինիստր Ֆլօքէն առաջարկեց պարլամենտին սահմանադրութեան վերաքննութեան նախադիժը, որի ամենագլխավոր կէտը սա է, որ պատգամաւորները ժողովը չընտրուի ամեն չորս տարին մի անգամ, այլ որ ամեն երկու տարին մի անգամ վերընտրուին պատգամաւորները ժողովի և սենատի մի երրորդ մասերը: Այդ խնդիրը մեզ դեռ կը զբաղեցնի մի այլ անգամ, ուստի առ այժմ անցնում ենք՝ միմիայն յիշատակութիւն անելով:

Նոյեմբերին՝ վերջացան ընտրութիւնները պրուսական պատգամաւորների ժողովի համար՝ յունիս ամսին ընդունած օրէնքի համեմատ, այսինքն, որ պատգամաւորների լիազօրութիւնները լրանան ոչ երեք, այլ հինգ տարուց յետոյ: Ընտրուեցին՝ պահպանողականներ՝ 198, ազգային-ազատամիտներ՝ 87, կենդրոնականներ (կղերական)՝ 99 հոգի, միասին առած՝ յաջող Բիսմարկի համար:

Սեպտեմբերին, նոյ. 6-ին ընտրուեց նոր նախագահ Հիւսիսային Սեպտեմբերի նահանգների՝ հանրապետականների կանգիտատ զեներալ Հարիսօն, որ փոխարինեց դեմօկրատական կուսակցութեան պատկանող Կլեւելենդին: